

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Լիբանանի Հանրապետության կառավարության միջև առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ի դեմս առողջապահության նախարարության և Լիբանանի Հանրապետության կառավարությունը՝ ի դեմս առողջապահության նախարարության, (այսուհետ՝ Կողմեր),

ելնելով իրենց երկրների միջև առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու անհրաժեշտությունից,

կնքեցին սույն Համաձայնագիրը.

Հոդված 1

Կողմերը, սույն Համաձայնագրին և իրենց երկրների ներքին օրենսդրությանը համապատասխան, կաջակցեն միմյանց առողջապահական և բժշկագիտական ինստիտուտների, կենտրոնների և այլ հիմնարկների միջև համագործակցության զարգացմանը, որը կիրականացվի դրանց միջև կնքվելիք երկկողմ համաձայնագրերի միջոցով:

Հոդված 2

Կողմերը առաջնային և ուղարկող երկրի կողմից առաջարկված թեմաներով կկազմակերպեն փորձագետների պատվիրակությունների աշխատանքային այցելություններ՝ նպատակ ունենալով փոխադարձաբար ծանոթանալու երկու երկրների առողջապահության համակարգերին և առավել լավ պատրաստելու իրենց առողջապահության գիտահետազոտական ոլորտների աշխատողներին:

Կողմերը միմյանց պետք է տեղեկացնեն փորձի փոխանակման նպատակով առաջարկված անձանց և փորձագետների անունները, մասնագիտությունները, կոչումները և թեմաները փոխհամաձայնությամբ որոշված ամսաթվից 30 օր առաջ: Ժամանման օրվա և ճանապարհի մասին ուղարկող Կողմը ընդունող Կողմին պետք է տեղեկացնի ամենաքիչը 15 օր առաջ: Ուղարկող Կողմը իր վրա կվերցնի ուղևորվող մասնագետների ճամփորդական ծախսերը: Ընդունող Կողմն իր վրա

կվերցնի այցելության ընթացքում մյուս Կողմի մասնագետների՝ երկրի ներսում տրանսպորտի, հյուրանոցի և օրվա կեցության ծախսերը:

Հոդված 3

Բժշկագիտական ոլորտում համագործակցության զարգացման նպատակով Կողմերի բժշկագիտական միությունները մինչև ամեն տարվա դեկտեմբերի 15-ը միմյանց կներկայացնեն գիտաժողովների ժամանակացույցը: Միությունները նմանապես կներկայացնեն վերոհիշյալ ժողովների կազմակերպչական մանրամասները և մյուս Կողմի մասնակիցների համար կապահովեն նվազեցված վճարումներ ու արտոնյալ սակագներ՝ կախված ֆոնդերի հնարավորություններից:

Հոդված 4

4.1. Կողմերը կաջակցեն բժշկական և գիտահետազոտական ինստիտուտների միջև ուղղակի համագործակցությանը:

Ինստիտուտների միջև ուղղակի համագործակցությունը կստեղծվի գիտական նյութերի և տեխնիկական փաստաթղթերի փոխանակման, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ համատեղ հետազոտական ծրագրերի միջոցով՝ հիմնված աշխատանքի համատեղ պլանների և մեթոդների վրա:

Ինստիտուտների ղեկավարների կողմից ստորագրված պլանները կգործեն տվյալ երկրի իրազեկ մարմինների կողմից հաստատվելուց հետո՝ տեղի օրենսդրությանը համապատասխան:

4.2. Կողմերը կօժանդակեն միմյանց հիվանդանոցների միջև ուղղակի կապերի ու համագործակցության հաստատմանը:

Հոդված 5

5.1. Կողմերը փոխադարձաբար կնպաստեն բժշկական ամսագրերի, առողջապահական ուսուցողական նյութերի փոխանակմանը:

5.2. Կողմերը միմյանց կուղարկեն առողջապահական վիճակագրական տվյալներ և վարակիչ հիվանդությունների վերաբերյալ համաճարակա-բանական հաշվետվություններ:

5.3. Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, կփոխանակեն տեղեկություններ միմյանց առողջապահական օրենսդրությունների և հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտների մասին:

5.4. Կողմերը կնպաստեն բժշկական հրատարակչությունների միջև համագործակցության զարգացմանը:

Հոդված 6

6.1. Կողմերը իրենց երկրում պաշտոնական նպատակներով գտնվող մյուս Կողմի քաղաքացիներին, ներառյալ դիվանագիտական ու հյուպատոսական անձնակազմին, փոխադարձաբար կապահովեն անվճար բժշկական օգնությամբ, դեղամիջոցներով և բժշկական նյութերով, ինչպես նաև անվճար հիվանդանոցային բուժմամբ՝ թերապևտիկ և վիրաբուժական անհետաձգելի միջամտության անհրաժեշտության դեպքում:

6.2. Թերապևտիկ և վիրաբուժական անհետաձգելի դեպքերում որևէ Կողմի տարածքում ժամանակավոր այցելությամբ գտնվող զբոսաշրջիկներին ընդունող Կողմը, տվյալ երկրի քաղաքացիների համար գործող կարգին համապատասխան, պետք է ապահովի բժշկական խնամքով, մինչև որ հիվանդի վիճակը թույլ տա առանց առողջությունը վնասելու նրան տեղափոխել իր երկիր:

6.3. Համաճարակային մեծ նշանակություն ունեցող վարակիչ հիվանդությունների դեպքում Կողմերից մեկի տարածքում ժամանակավորապես գտնվող մյուս Կողմի քաղաքացիները կօգտվեն անվճար բժշկական ծառայությունից:

Երբ հիվանդին հնարավոր լինի տեղափոխել, ընդունող Կողմը անհրաժեշտության դեպքում կապահովի հիվանդի տեղափոխումը մինչև իր երկրի սահմանը, որտեղ նա կընդունվի տեղական իշխանությունների կողմից:

6.4. Կողմերը կարող են ախտորոշման և բուժման նպատակով հիվանդներ ուղարկել մյուս Կողմին՝ ամեն առանձին դեպքում փոխադարձ համաձայնության հիման վրա: Դրա հետ կապված ծախսերը կվճարի ուղարկող Կողմը:

6.5. Կողմերից մեկի քաղաքացու՝ մյուս Կողմի տարածքում մահվան դեպքում Կողմերը փոխադարձաբար կապահովեն անվճար դատաբժշկական ծառայություններ, ինչպես նաև դիակի զմռսում կամ պահպանման այլ ձևեր: Տեղափոխման հետ կապված ծախսերը կվճարի մահացածի ընտանիքը:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի իրականացմանն ու համակարգմանն առնչվող հարցերի կարգավորման նպատակով Կողմերի երեքական

ներկայացուցիչներից կատեղծվի համատեղ հանձնաժողով, որի նիստերը հաջորդաբար կգումարվեն Երևանում և Բեյրութում:

Հոդված 8

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կա-տարված փոփոխությունները կձևակերպվեն առանձին արձանագրու-թյուններով, որոնք կհանդիսանան նրա բաղկացուցիչ մասը:

Նշված արձանագրություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի երկրների ներքին օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ գործընթացն անցնելու մասին դիվանագիտական ճանապարհով փոխադարձաբար իրազեկ դարձնելու օրվանից և գործում է 5 տարի ժամկետով:

Այն կարող է ինքնաբերաբար երկարաձգվել ևս 1 տարով, եթե Կողմերից որևէ մեկը սույն Համաձայնագրի ժամկետը լրանալուց առնվազն 6 ամիս առաջ նյուս Կողմին դիվանագիտական ճանապարհով չհայտնի այն դադարեցնելու իր մտադրության մասին:

Համաձայնագրի գործողության դադարեցումը չի խոչընդոտի Համաձայնագրով նախատեսված ծրագրերի հետ կապված այն պարտավորությունների իրականացմանը, որոնք սկսվել, բայց չեն ավարտվել Համաձայնագրի գործողության դադարեցման պահին:

Կատարված է Երևան քաղաքում 2001 թվականի մայիսի 2-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի դեկտեմբերի 21-ից: